Զ. ԱՃԵՄՅԱՆ

# ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



ՀԽՍՀ ՊԵՏՀՐԱՏ 1939

4Ա.99-8
Ա-50

# Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն Ի

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

## ՅԵՎ

## ՀԱՏՎՈՂ ԱՅԲՈՒԲԵՆ

ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

C арм-К
2178
1005-10
496.99-8
Ա-50

Ձ. ԱՃԵՄՅԱՆ

# ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

06 FEB 2013

З. АДЖЕМЯН

**БУКВАРЬ**

Для 1-го класса

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

6/198-67








3





Աա

ա Ա



ա

ա́ ա



Ս
ս Ս

ս



ս՜ ս

**Սա**

**ա-սա**

**ասա ա։ Սաս ս՛**

ս ս ս ս ս Ս Ս Ս Ս Ս

սա սա։ Սա ասա։



ր
ր Ր

ր



ս ա ր

**Ա-րա**

**Արա, ասա սար**

Սար ասա, Արա։

ր ր ր ր ր Ր Ր Ր Ր Ր

սար, սար։ Սար։ Արա

է
Է է



է

է ղ

| | |
|---|---|
| էշ | է - շեր |
| սար | ո - րեր |
| սեր | շո - րեր |

Է-րա, Էրա սա եղ է:

Ջարա, սա ղոր է:

Սաղա սա սեր է:

Սար է, սեր է, եղ է:

է է է - է է է է ղ ղ ղ - է է է
եղ է: եղ է: Էրա, սա ղոր է:



Լ
լ Լ



լ

լ ո ր

| | | |
|---|---|---|
| Լար | էլ | լոշ |
| լոր | ալ | սա-լոր |
| շոր | շալ | լո-րեր |





Սա լոր է:
Սա էլ
սալոր է:

լ լ լ լ Լ Լ Լ Լ
լոր, Լոր, սալոր:

# Ու
## ու Ու



ու

ու լ

| | | | |
|---|---|---|---|
| Ուշ | լու | ուս | Լու-սո |
| ուր | լուր | սուս | լու-րեր |
| ու-րուր | սուր | Ա-րուս | ու-լեր |

— Սաշա, ո՞ւր:

— Սար:

— Արուս, ո՞ւր:

— Սար:

Լուսո, սա ուլ է:

ու ո ւ ու Ու Ո Ու Ու Ու

ուս, ուլ: Ուլ, ուլեր: Արուս:



# Ն
## ն Ն



ն

շ ու ն

| | | | |
|---|---|---|---|
| Նո-րա | ա-նուն | նուշ | նոր |
| Լե-նա | Ու-նան | ա-նուշ | Սո-նա |
| Նու-նե | Սու-րեն | ա-շուն | Շու-շան |

Լենան ու Արան շուն ունեն:

Աշուն է:

Նունեն ու Լուսոն

նուշ ու սալոր ունեն:

— Լուսո, սա, անուշ նուշ է:

— Անուշ է, Նունե, անուշ է:

Ն ն ն ն ն ն ն ն ն

շուն, նուշ, Նունեն ու

Անուշն նոր շուներ ունեն:



## Ուշ է

Լենա, ուշ է:
Նա նա՜ ա՜ շ՜ շ՜
Քուշան, սուս արա,
Լենան նանա:
Ուշ է, ուշ:

Նորա, Արուս, Երա, Սուրեն,
Սոնան, Լենան, Նունեն ո՞ւր են։



## Տ տ



տ

տ ու ն

| | | | |
|---|---|---|---|
| Տուն | շատ | տար | Ա-շոտ |
| տոն | շուտ | տուր | լո-տո |

Աշուն է, աշուն,
շո՛ւտ արա, տար տուն
շատ սալոր ու նուշ,
ու անուշ արա։

Լոտո տես ու ասա։

| | | |
|---|---|---|
|  |  |  |
| ս-ր | է- | շ-ր |
|  |  |  |
| շ-ն | -ուն | ն-շ |

611/98-64

Կ

կ Կ



Կ

Կա տու

| | | | |
|---|---|---|---|
| Կա-րո | կես | կար | շեկ |
| Կա-րեն | կետ | կա-րաս | շու-կա |



Նորան կատու ունէր։

Կորել է կատուն, տարել են կատուն։

— Ո՞ւր է կատուս, ուր, Աշոտ, կատուս ո՞ւր։

— Նորա, տես, կատուն Կարոն է տարել,

Կարոն է տարել, կատակ է արել։

[illegible]



մ

մ Մ



Մ

Մ ու կ

| | | | |
|---|---|---|---|
| Մուկ | Նա-մակ | Մա-րո | Ա-րամ |
| մեկ | ա-ման | Մա-րատ | Մա-րուս |
| մոմ | ա-տամ | Մա-կար | մա-սուր |

Կատուն մուկ է ուզում։

Մուկ շատ կար,

կատուն կերել է։

Կա մեկ մուկ,

էն էլ կատուն ուզում է։



Մամոն կար է անում։



# Մուկ ու կատու

Մարոն մուկ,
Կարոն կատու։
— Մարո, շո՜ւտ, շո՜ւտ,
կատուն մոտ է,—
ասում է Կամոն։
— Շուտ արա, Մարո,—
ասում է Լենան։

Մարոն մուկ, Կարոն կատու։



ն-մ-կ  կա--  կա---  մ-մ



ի

ի Ի



ի

ի լիկ

| | | | |
|---|---|---|---|
| Ի-լիկ | տա-տի | մի | մա-նա-րան |
| ու-լիկ | ա-րի | միս | մա-նա-րա-նում |
| Սե-միկ | մա-նի | ա-միս | ի-լիկ-ներ |

Տատին մի իլիկ ունի։ Նա մենակ է մանում։
— Տատի, մանարան տեսե՞լ ես։
Արի տես,— ասում է Իրան։
Մանարանում շատ են մանում,
շատ են մանում։



լ-ս-ն  մ-տ-տ  ի-ի-  շ-շ

ի ի ի ի ի Ի Ի Ի Ի

Իլիկ: Իլիկ: Իրան, արի գնանք:

Ը
ը Ը



ը

ըն կեր

# Անուշը

Սա է ընկեր Անուշը,
սա էլ սիրուն Մանուշը,
սիրուն Ոնիկը,
սիրուն Կիմիկը։





— Ընկեր Անուշ, արի մեր
տուն,— ասում է Կիմիկը։
—Մեր տուն արի, մեր տունը մոտ է,—
ասում է Ոնիկը։



| | | | |
|---|---|---|---|
| Ըն-կեր | տուն | շուն | ըն-տիր |
| իմ | մեր | մեր | ըն-տա-նի |
| ըն-կե-րը | տու-նը | շու-նը | սի-րե-լի |

ը ը Ը Ը ը ը ընկեր։
Գրիշն ու Անուշը ընկերներ են։



Ք
ք Ք



ք

ք ա ր

| | | | |
|---|---|---|---|
| Քա-մի | մա-քուր | տա-նիք | քար-տաշ |
| քա-նոն | շա-քար | տա-րիք | Քա-նան |



Քարտաշ Սաքոն քար է տաշում։
Քար են տաշում Սաքոն ու Քանանը։
Սաքոն ու Քանանը քարտաշ են։
Տիրանը քար է տանում։
Միսակը կեր է տանում։
Մելքոնը, Կամոն ու Արշամը տուն են շինում։
Սիրուն ու մաքուր շենքեր են շինում։

ք ք Ք Ք
քար։ Քանանը քար է տաշում։

Տիկ-տիկ-տիկ, սի-րու-նիկ,
տիկ-տիկ-տիկ, իմ տիկ-նիկ,
լա, լա, լա եւ մի լա,
լա, լա, լա իմ լալա։



Արմիկը մի տիկնիկ ունի։
Տիկնիկի անունը Լիլիկ է։
Արմիկը շատ է սիրում իր Լիլիկին։
Նա Լիլիկի համար կարմիր շորեր է կարել։

  

ք-ր     շ-ք-ր     ք-ն-ն

Տու-տա-սե-լուկ
Կար մի կարմիր կամ,
Կամ մի կարմիր կամ կար։

Արմիկը մի տիկնիկ ունի:
Տիկնիկի անունը Լիլիկ է



Ղ
ղ Ղ



ղ

մ ա ղ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ | Ղու-կաս | ա-սեղ | ա-ղա-ման |
| մաղ | մե-ղու | կա-ղին | ան-կո-ղին |
| աղ | սե-ղան | Ծո-ղիկ | ա-քա-ղաղ |

Սաքոն ու Ղուկասը
մաղում են ալյուրը:
Արգեկը մեքենա ունի:
Մեքենան լավ է մաղում:
Ղուկաս, արի ալյուրը
տար.– ասում է Ջողիկը:

ղ ղ ղ ղ Ղ Ղ Ղ Ղ
Սաղ: Ղուկաս, մաղը տուր:

թ

Թ թ



թ

թ ու թ

| | | | |
|---|---|---|---|
| Թութ | քիթ | Թա-թիկ | Թու-թակ |
| Թաթ | կաթ | Սա-թիկ | Թատ-րոն |
| Թել | Թան | Թա-նաք | Թաշ-կի-նակ |

Թամարը թութ է ուտում։
Սաթիկը թաշկինակ է կարում։
Շողիկը տեսնում է ու ասում տատին.
— Տատի, թել տուր, ասեղ տուր։
Տատի, թող կար անեմ, թաշկինակ կարեմ։
Տատիկը տալիս է թել ու ասեղ։
— Շողիկ, ուղիղ կարի,
Շողիկ, սիրուն կարի, — ասում է տատիկը։







բ

Բ բ



բ

բ ու ն

| | | | |
|---|---|---|---|
| Բու | բե-րան | բաղ-նիք | բա-նա-լի |
| բուն | լո-բի | Բար-սեղ | բա-լե-նի |
| բակ | բամ-բակ | Բաբ-կեն | Բա-լա-սան |

# Մեր Բոբը



Մեր շան անունը Բոբ է։
Նա շատ սիրուն շուն է։
Ինքը կարմիր է, թաթերը շեկ։
Բոբը մեր բակում բուն ունի։
Բունը շինել են Բաբկենը, Սաքոն ու Թամարը։
Բոբին բոլորը սիրում են։ Միս են տալիս, շաքար են տալիս։



| | | | |
|---|---|---|---|
| Սուր | կար | լուր | կը-տուր |
| մը-սուր | նը-կար | բը-լուր | կը-տոր |

Բուլիկի մաման արտելում կար է անում։
Նա Բուլիկին տանում է մսուր։

---

Մսուրում շատ մանուկներ կան։

Ալին ու Բուլիկը տուն են շինում։ Բաբկենը նկար է անում։ Նկարել է բալ, տուն, շուն, մուկ, կաղին, թութ, մաղ, խլիկ։



Քնարիկը շարում է լոտոն։

Նրա լոտոն ութ նկար ունի։

  

-լամ　　-կար　　-կուր

Բաբկենը նկար է անում։



# Դ

դ Դ



Դ

դ ր ո շ ա կ

| | | | |
|---|---|---|---|
| Դու | Ի-դա | դե-ղին | Դա-րի-կո |
| դաս | դա-նակ | Դը-սեղ | դա-սա-րան |



Տոն է։ Դարիկոն ու Բելան դասարան են բերել ընկեր Լենինի ու ընկեր Ստալինի նկարները։ Կարմիր կտոր են բերել։ Իդան ու Եդիկը դրոշակ են շինում։

դ Դ Դանիկը դրոշակ է շինում։

Գ

գ Գ



Գ

գիրք

| | | | |
|---|---|---|---|
| Գիր | գա-րի | Գուր-գէն | Բա-գու |
| գիրք | գա-րուն | Մար-գո | գըն-դակ |



Գուրգէնը գիր է գրում։
Նա շատ մաքուր ու սիրուն է գրում։
Մարգոն գիրք է կարդում։
Կատուն էլ գտել է Գուրգէնի գնդակը, գլորում է դես ու դեն։

Գրիգորը նամակ է գրում։



Զ

զ Զ



Զ

զանգ

| | | | |
|---|---|---|---|
| Զա-նի | մազ | Ա-զատ | գա-զար |
| Զա-քար | դեզ | բա-զե | Նա-զար |
| Զան-գու | Թուզ | Ղա-զար | զբո-սանք |



Զը՛նգ-զընգ, զը՛նգ-զընգ ...
Զանգը տալիս են։
— Շարքի կանգնեք, Նազիկ, Զանի,
Մենք գնում ենք զբոսանքի։

Զարիկն ու Դանիկը,
Նազիկն ու Զաբելը,
Թամարն ու Գագիկը,
Բոլորը գնում են։

## խ

խ Խ



խ

խ ո զ

| | | | |
|---|---|---|---|
| Սեխ | Խո-րեն | խակ | խոզ |
| սոխ | խա-ղող | սո-խակ | խո-զա-նակ |
| ու-րախ | խա-նութ | մե-խակ | խա-ղա-լիք |

*Խոզի մազը կոշտ է:*

*Խոզը շատակեր է:*

*Նա կաղին շատ է սիրում:*

*Ուտում է ու գիրանում:*

*Չար բյուր են ասում,*

*թե խոզը կեղտ է սիրում:*

*Մեր խոզերը մաքուր են ու գեր:*

*[illegible] Խորեն, [illegible]*

*Մեր խոզերը մաքուր են:*



# Մաքուր Աշխենը

Աշխենը շատ մաքրասեր է։

Նա ամեն օր մաքրում է իր շորերը, կոշիկները։ Սանրում է մազերը։

Խորենը տեսնում է Աշխենին ու ինքն էլ իր շորերն է մաքրում։



Նրանք մի քանի տեսակ խոզանակ ունեն։ Շորի խոզանակ, կոշկի խոզանակ, ատամի խոզանակ։

| | | | |
|---|---|---|---|
| Քարտ | ունք | մենք | գը-նում ենք |
| տետր | ուղտ | սը-րանք | տե-սանք |
| մեղր | թուղթ | նը-րանք | կե-րանք |

*[illegible]*



*ուղ-*



*մ-ղ-*



*մեղ-*



*միր-*

Յ

յ Յ



յ

յ ե զ

| | | | |
|---|---|---|---|
| Յե-րեք | յե-ղա-նակ | յուղ | յոթ |
| յե-րես | Յե-ղի-շե | գյուղ | յերգ |
| Յե-րան | Ա-րուս-յակ | աղ-բյուր | յեր-գա-րան |

Մեր կոլխոզը շատ յեզներ ունի։
Նրանք սիրուն են ու խոշոր։
Նրանք միշտ մաքուր են ու կուշտ։

Մեր կոլխոզի յեզներին Յեղիշն է խնամում։ Կեր է տալիս, մաքրում է։

— Յեղիշ, դու շա՞տ ես սիրում յեզներին։

— Այո, շատ եմ սիրում։ Նրանք խելոք են ու աշխատող, — ասում է Յեղիշը։

Կոլխոզը մեքենաներ էլ ունի։

Յ յ Յ յա, յե, յո, յու, Յա, Յե, Յո, Յու
Յոթ յեզ, [illegible] Յերան
[illegible]



Ց

ց Ց



ց

ց ա խ

| | | | |
|---|---|---|---|
| Ցեխ | կա-ցին | քա-ցախ | սղ-ղո-ցենք |
| ցեց | սղ-ղոց | ցու-ցակ | կո-տո-րենք |
| թաց | բա-ցիկ | ցո-րեն | կըտ-րա-տեց |

Ցուրտ է։ Զաքարը մենակ ցախ է կոտրում։
Ցոլակը տեսնում, ասում է.
— Կա՛ց, կաց, Զաքար, մենակ մի՛ կոտրի։
Յես գնամ մեր յերկար սղոցը բերեմ, միասին սղոցենք ու կոտրենք ցախը։ Ո՜յ, ցուրտ է, ցուրտ։

---

## ՍՂՈՑՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ





Տախտակն ասաց.
— Ա՜խ, այն սղոցը, սղոցը, մաշեց ներսս, կտրատեց։
Իսկ ցախն ասաց.
— Ա՜խ, այն կացինը, կացինը,
զարկեց, կողերս կոտրատեց։

ց ց ց Ց [illegible]

Ժ
ժ Ժ



ժ

ժա մա ցույց

| | | | |
|---|---|---|---|
| Ուժ | Ժի-րայր | բա-ժին | բու-ժակ |
| կուժ | Ժե-նիկ | բա-ժակ | բը-ժիշկ |

Ժամացույցը ցույց է տալիս ժամը ութը։

Ժիրայրը թեյը խմում, ժիր-ժիր գնում է ուսումնարան։



Ժամը 9-ին զանգը տալիս են։ Յերեխաները գնում են դասի։

Ժամը մեկին բոլորը տուն են գնում։

Ցոլիկն ու Ժիրայրը միասին են գնում տուն։ Նրանք խոսում են իրենց դասերի մասին։





Վ
վ Վ



վ

վ ա ր դ

| | | | |
|---|---|---|---|
| Վար-դան | Սե-վան | ա-րեվ | վր-տակ |
| Վար-սիկ | Յե-րե-վան | բա-րեվ | նա-վակ |
| վոզ-նի | Կի-րո-վա-կան | տե-րեվ | լավ |

— Մայրիկ, տես, վարդը բացվել է։ Վաղը տանեմ ուսումնարան,— ասում է Վարսիկը։

Մյուս որը Վարսիկը վարդը տարավ դասարան։

— Վարսիկ, տեսնեմ, տամ ...— ասում է Ժիրայրը։

— Տուր, Վարսիկ, տեսնեմ, ելի կտամ,— խնդրում է Ցոլիկը։

Վարսիկը տալիս է վարդը։

— Ընկեր Անուշը գալիս է, յեկեք վարդը տանք նրան,— ասում է Լեվոնը։

Յերեխաները վարդը տվին ընկեր Անուշին։



| | | | |
|---|---|---|---|
| Մըկ-նիկ | խըն-դիր | Սատ-ղիկ | Թը-թու |
| մըկ-րատ | Սըմ-բատ | կանգ-նիր | դը-դում |
| գըլ-խարկ | սըմ-բակ | նըս-տիր | կը-կու |

## ՄԿԱՆ ԽՐԱՏԸ

Վողնին շարունակ մկնիկներ եր վորսում ու իր վողնիկներին կերակրում։

Մի սիրուն մկնիկ մի կատու յե տեսնում ու ասում նրան.

— Մեր տեր ու տիրական կատու, վողնին մեզ կոտորում ե, արի ազատիր մեզ։

Կատուն ասում ե.

—Յեկ մոտս ազատ ման արի, յես կսաստեմ վողնուն։

Մկնիկի մայրը տեսնում ե, վոր կատուն սրում ե ատամներն, ասում ե.

— Իմ սիրունիկ մկնիկս, կատուն կսաստի ուրիշներին, վոր մեզ մենակ կոտորի։

— Ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ ... զարմանում ե մկնիկն ու շուտ մտնում ե իր տնակը։






-դում -կու գլ-արկ մ--իկ



Ջ

ջ Ջ



ջ

ջ ու ր

| | | | |
|---|---|---|---|
| Ջա-լալ | աջ | ջը-րա-ղաց | շըր-ջան |
| Ջա-վո | ա-կանջ | ժը-րա-ջան | Ի-ջե-վան |
| Մար-ջիկ | կա-մուրջ | մի-ջատ | Դի-լի-ջան |
| ջու-թակ | ջինջ | մըր-ջյուն | Լե-նի-նա-կան |

ջ ն ջ Ջ Ո Ջ ջուր. Ջամիկը
ջուր է տալիս ծաղիկներին.

## ԻՄ ՋՐԱՂԱՑԸ



Մեր տան մոտով ջուր ե վազում խոխոջելով։ Ջրաղաց եմ շինել տաշեղներից։

Ջուրը զարկում ե, անիվը շըրջում։

Լա՜վ ե, լավ։ Ջա՜ն, ջա՜ն։

հ
Հ Հ



հ

հ ա վ

| | | | |
|---|---|---|---|
| Հավ | հա-տիկ | Ո-հան | հոր |
| հաց | հայ-րիկ | Վա-հան | հորթ |
| հող | Հաս-միկ | հա-րե-վան | հասկ |

—Ես ո՞ւր են կորել հավերը,—ասում է Հասմիկը։

— Ջո՜ւ, ջու, ջու, ջու ...
հավերը վազելով գալիս են, կուտն ուտում, ջուր խմում, ելի գնում քուջուջ անելու։



Հասմիկենք յոթ հավ ունեն։ Կով ու հորթ ունեն։ Մենք ել ունենք։ Մեր հորթուկը շատ գեղեցիկ ե։





չ
Չ Չ



չ

չ ի ր

| | | | |
|---|---|---|---|
| Չոր | վոչ-խար | գը-րիչ | Չու-չիկ |
| չա-միչ | Վա-չիկ | սու-լիչ | կա-չա-ղակ |

— Ինչ լավ չիր ե, մայրիկ ջան, գնե՜ս,— ասացին Աչիկն ու Վաչիկը։

Մայրիկը մտավ խանութ։ Աչիկն ու Վաչիկը նրա հետևից, ժիր Չուչիկն ել նրանց հետեվից։

Գնեցին չիր ու չամիչ, թուզ ու ընկույզ։ Աչիկն ու Վաչիկն ուրախացել են, իսկ Չուչիկը կանգնել, նայում ե նրանց աչքերին, յերեվի ուզում ե ասել.

— Չի՞ լինի, մի բան ել
Չուչիկի համար գնեք։

---

Հանելուկ.—Չորս յեղբայր են,
մի գդակ ունեն։ (Ս-ղ-ն)



Պ
պ Պ



պ

պ ա պ

| | | | |
|---|---|---|---|
| Պատ | հո-պոպ | րո-պե | տոպ-րակ |
| պար | պա-րան | դըպ-րոց | պա-նիր |
| պարկ | կա-պիկ | պի-ո-ներ | պա-հա-րան |
| Պե-տիկ | կո-պեկ | պատ-րաստ | Նա-պաս-տա |

## ՊԵՏՐՈՍ ՊԱՊԻԿԸ

Պապիկը պարտեզում թթենի յեր տնկում։

Նրան ասացին.— Այ պապի, դու ինչքան պիտի ապրես, վոր այդ թթենու պտուղն ուտես։ Ինչու յես զուր չարչարվում։

Պապիկը ժպտաց.— Յես չեմ ուտի, ուրիշները կուտեն, պապիկին կհիշեն, շնորհակալ կլինեն։





Ռ
ռ Ռ



ռ

ռ ա դ ի ո

| | | | |
|---|---|---|---|
| Ռա-դի-ո | նուռ | ա-ռու | քա-ռա-սուն |
| Ռու-բիկ | դուռ | պա-տառ | վա-ռա-րան |
| պա-ռավ | մա-մուռ | Քա-նա-քեռ | ու-ռե-նի |

Ռուզանը Ռուբիկի հետ ռադիո յեն լսում։

— Ռուզան, լսի՛ր, ընկեր Ստալինի մասին յերգի բառեր են հաղորդելու։

Ռուզանը վազելով թուղթ ու մատիտ ե բերում, տալիս յեղբորը։— Առ, Ռուբիկ, գրի՛ր, դու արագ ես գրում,— ասում ե նա։

— Պատրաստ եք, սկսում ենք ...



Դու նստել ես Մոսկվայում.
ջան Ստալին, ջան Ստալին,
երկիրն անշեղ ղեկավարում,
ջան Ստալին, ջան Ստալին,
պողպատի նման Ստալին:



Էմման, Աննան,
Սիրանն ու Սոնան,
Ռուզանն ու Կարոն,
Ջուղանն ու Մարոն
Հոկտեմբերիկ են:





## ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

Մենք, մենք, մենք,—
Հոկտեմբերիկ ենք,
Մեր սրտում ունենք
Շողշողուն արև,
Վառ գարուն ունենք
Մեր գլխի վերև:
Երբ քայլում ենք մենք—
Ասես շանթ լինենք,
այնպես աշխույժ ենք:
Մենք, մենք, մենք
Անվախ ու արի
Հոկտեմբերիկ ենք:

---

**Շուտասելուկ.**
Վռամը գռանը, կռում է կռանը:

ծ

ծ Ծ



Ծ

**Ծ ա ռ**

| | | | |
|---|---|---|---|
| Ծառ | մեծ | այծ | գոր-ծա-րան |
| ծա-ղիկ | ծով | ծա-րավ | ծի-ծեռ-նակ |
| ծի-տիկ | Ծո-վիկ | Պայ-ծառ | ծա-ռա-տունկ |

*Ծիտիկ*

*Ծի՜վ, ծի՜վ, ծվծվա՜ն*
*Ծիտիկն իջավ մեր դռան.*
*Տվեք հատիկ, տվեք հաց.—*
*կտցեց, թռավ ու գնաց:*

---

**Շուտասելուկ.**
**Քամին կածանում ծառ է ծածանում:**

*ծ ծ ծ Ծ ծ ծ ծառ, ծիտ, ծով, ծայր:*
*Ծիտիկն ու [illegible] [illegible] են:*

յեվ

և Յեվ

և

## ՅԵՎԳԻՆԵՆ ՅԵՎ ԱՐՈՒՍՅԱԿԸ

Ցուրտ է: Յեվգինեն և Արուսյակը մտել են սենյակ, նկարում են ու գրում:
Արուսյակը նկարել է մի կապիկ և մոտը գրել.



*Պիկ-պիկ-պիկ այ կապիկ,*
*հագել ես ալ շապիկ,*
*կապել ես շալ գոտիկ,*
*կանգնել ես փոքրիկ:*



Յեվգինեն էլ գրել է հանելուկ.
Մարմինը՝ մսից, հագուստը ասեղից:

*Զորյանը և [illegible] նկարում են*
*և գրում. և, և, և, յեվ*

Ծ
ճ Ճ



ծ

ծ ա ն ծ

| | | | |
|---|---|---|---|
| Ծաշ | ծի-ծու | կո-ծակ | կը-ծուծ |
| ծուտ | ծա-կատ | կա-վիճ | ծը-կույթ |

Ցուրտ է, ճանճերը կորել են, չկան։
Նրանք պահվել են ու քնել։
Գարնանն ելի դուրս կգան։
Անտառում չեն յերևում վոչ ճիճու, վոչ ճըպուռ, վոչ բզեզ։
Ծառերի տերևները դեղնել են ու ընկել։
Միայն յեղևնին է կանաչ մնացել։
Թռչունները չվել են տաք յերկրներ։
Մնացել են ճնճղուկը, կաչաղակը։

հանելուկներ.- մեր գլխի վերև,
փոփքերը վերև։(ծ--ծ)
Ձերմակ է. շաքար չէ,
ամուր է. քար չէ։(ձա-ու-)



Ձ
ձ Ձ



ջ

ջ ու

| | | | |
|---|---|---|---|
| Ձի | ձյուն | ձը-մե-րուկ | անձ-րև |
| ձուկ | ձը-մեռ | ձե-ռա-գործ | բը-րինձ |

Ժամի 12-ն է։ Յերեխաները ձեռքերը լվացին, յեկան նախաճաշելու։ Ձոնիկն էլ յեկավ։
Մի բաժակ թեյ խմեցին, ձու կերան, վերջում էլ խնձոր ստացան։
Խնձորի համար շատ ուրախացան։



փ-նջ խ-ձ-ր դ-ղձ խա--- ծի---

Հանելուկներ. 1. Կարաս ունեմ մի պուճուր, միջին յերկու գույնի ջուր։ (Ձ-)
2. Մեկը լցնում է,
Մյուսը խմում է,
յերրորդը՝ անում։ (ա-ձ-և, հ-ղ, բ-յս)

փ

փ Փ



փ

փ ի ղ

| | | | |
|---|---|---|---|
| Ափ | փայ-լուն | Փայ-լակ | փայտ |
| չափ | փա-փուկ | փր-չակ | փոք-րիկ |
| փող | փե-տուր | փե-թակ | Ար-փիկ |

— Փայլակ, Փայլակ, արի, գնում ենք գազանանոց, — կանչում է յեղբորը փոքրիկ Արփիկը։

Մայրիկը, Փայլակն ու Արփիկը միասին գնացին գազանանոց։

Այնտեղ կային մեծ-մեծ արջեր, չար գայլեր, խորամանկ աղվեսներ, ճարպիկ կապիկներ, ուձեր և մի հսկա փիղ։ Գազանները փորձում եյին դուրս գալ վանդակներից, բայց իզուր։ Յերկաթե ձողերից շինած վանդակներն ամուր փակած եյին։





## ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ



Փողոցով գնում են տրամվայ, ավտոմոբիլ, ավտոբուս, տրոլեյբուս։



Գնացքներն ավելի հեռու տեղեր են գնում։



Ծովի յերեսին լողում են շոգենավերը։




Բարձր, բարձր, օդի մեջ թռչում են սավառնակները։

ֆ

Ֆ Ֆ



ֆ

ֆուր գոն

| | | | |
|---|---|---|---|
| Ֆլո-րա | կար-տո-ֆիլ | պա-տե-ֆոն | շո-ֆեր |
| Ռա-ֆիկ | Նու-նու-ֆար | միկ-րո-ֆոն | ֆեր-մա |

Ֆերմայի ֆուրգոնով շուկա յեն բերել կարտոֆիլ, կաղամբ, սոխ, պամիդոր, կանաչեղեն։

Գյուղից կոլեկտիվ տնտեսությունը բերել է յուղ, պանիր, կաթ, ձու։ Բերել են նաև մրգեր՝ տանձ, խնձոր, ձմերուկ ու խաղող։

Այնքան մարդ կա շուկայում. խոսում են, ծիծաղում։ Լսվում է ռադիոյի հաղորդումը, պատեֆոնի ուրախ ձայնը։

Ռաֆիկը, Ֆլորան ու Ֆեբիկը յեկել են շուկա միրգ գնելու։





Սովորե՛ր,

սովորե՛ր,

սովորե՛ր ...

Ասել է ընկեր Լենինը։

Մենք կկատարենք մեր սիրելի և մեծ առաջնորդի պատգամները։

---



Խորհուրդների յերկրում բոլոր յերեխաները գնում են դպրոց.

վորը վոտքով,



վորը տրամվայով,



վորը սահնակով։



Վ. Ի. ԼԵՆԻՆ

Խորհրդային մեր յերկրում
Կյանքն ուրախ է, յերջանիկ։
Ո՞վ է մեր կյանքը դարձրել յերջանիկ,
Ո՞վ մեր յերկիրը դարձրեց յերջանիկ։
Կուսակցությունը բոլշևիկների,
Կուսակցությունը Լենինի-Ստալինի։

## ԼԱՎ ԸՆԿԵՐԸ

Վալոդյա Ուլյանովը սովորում էր գիմնազիայում։ Նրա ընկեր Կոլյան ասում էր.

— Թվաբանությունից բան չեմ հասկանում։ Գնամ Վալոդյայի մոտ։ Նա ամեն ինչ գիտե։

Տղաները վերցնում էին թվաբանության գիրքը, Վալոդյան բացատրում էր։

Շուտով Կոլյան սովորեց խնդիրներ լուծել։

Հաճախ Վալոդյան շուտ գալիս էր գիմնազիա, դասերից առաջ ընկերներին օգնելու։





Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

Ընկեր Ստալինը ԽՍՀՄ-ի ժողովուրդների և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջնորդը և ուսուցիչն է։

Ամբողջ աշխարհի աշխատավորները սիրում են նրան ամենաջերմ սիրով և անվանում են հարազատ Ստալին։

Մեր սիրելի Ստալինը

Ընկեր Ստալինը շատ է սիրում յերեխաներին. Նա միշտ հոգում է մեր մասին: Շնորհակալություն ընկեր Ստալինին մեր ուրախ ու յերջանիկ կյանքի համար:

## ՁՄԵՌ

Ձյուն է գալիս սպիտակ-սպիտակ,
Ցած է նստում փափուկ, խստակ,
Մանուկները ցրտում ուրախ,
Սկսում են թունդ ձյունախաղ:

## ՅԵՐԲ Է ԼԻՆՈՒՄ

Ձյուն կա դաշտերին,
սառույց՝ գետերին,
բուքն է հեծեծում,
դռները ծեծում:

Այդ յե՞րբ է լինում:



## ՁՄՌԱՆ ՕՐԸ

Ձմեռը ցերեկը կարճ է, գիշերը՝ յերկար:
Առավոտը մայրիկս զարթեցնում է ինձ:
— Վեր կաց, դպրոցից կուշանաս:
Իսկ յես կարծում եմ՝ դեռ գիշեր է:
Շուտ վեր եմ կենում ու վազում դպրոց:

Դպրոցից գալիս եմ, ճաշում, քիչ դռանը խաղում, գալիս դասերս սովորում, մեկ էլ տեսար մթնեց:

## ԾՏԵՐԻ ՍԵՂԱՆԸ



Ցուրտ ձմեռ է: Ամեն տեղ ձյուն ու սառույց:

Խեղճ ծիտիկները սոված դես ու դեն են թռչում, բան չեն ճարում ուտելու: Քաղցից շատ ծիտիկներ են կոտորվում ձմռանը:

Յերեխաները խնամում են ծիտիկներին: Նրանք մի տախտակ են ամրացրել ծառի ճյուղերի արանքում: Ամեն օր այնտեղ կեր են դընում: Հացի փշրանքներ, նախաճաշի մնացորդը:

Ծիտիկները տեսնում են, թռչում գալիս և ուտում: Յերեխաներն ամբողջ ձմեռը կերակրում են նրանց:

---

### Շուտասելուկ

Ճամբի տակին
ճմբան ծերին,
չալ ծտի ճուտի
ճիտը ծուռ:

### Հանելուկ

Աշխատանքի գործիք եմ,
զարկելու մեջ վարպետ եմ,
յերկաթ գլուխ, փայտե վոտ,
ով է, բոլորիս ծանոթ:

(Մ-ր-)



**Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ**

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի
Նախագահության Նախագահ

Մեր յերկրում կատարվում է մեծ շինարարություն։

Կառուցում ենք գործարաններ, կոլտնտեսություններ և խորհտնտեսություններ։

Կառուցում ենք յերկաթուղիներ, նոր դպրոցներ ու տներ։

մեր յերկրում բոլորն աշխատում
են. Աշխատում են ու լավ ապրում:



## ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ

Մեր դասարանը մեծ է և լուսավոր։ Այնտեղ ամեն ինչ մաքուր է։ Գրատախտակը և նստարանները նոր են։ Պատերը սպիտակ։ Անկյունում ծաղիկներ կան։ Նստարանների առաջ գտնվում են ուսուցչի սեղանը և աթոռը։ Պատին կախված են գեղեցիկ նկարներ։

Մենք սիրում ենք մեր դասարանը և մաքուր ենք պահում։ Հատակին վոչինչ չենք գցում և վոչինչ չենք փչացնում։

Մենք ունենք հերթապահներ։



հանելուկ Թե խոսես. կխոսի.
յեթե թողնես կմնի.
թեկուզ ինչ էլ որ լինի.
նա համբերյան չի մեռնի:
(գ-ր-)



Ղ. ԱՂԱՅԱՆ

## ԾԻՏԸ ՅԵՎ ԲԱԶԵՆ

Ծիտը ծառին ծլվլում է,
ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ ...
Բազեն գլխին պտտվում է,
վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ ...
Ծիտը լռեց, ծիտը վախեց,
վա՜յ, վա՜յ, վա՜յ ...
Բա՛զե, թո՛ղ, բա՛զե թո՛ղ,
հա՜յ, հա՜յ, հա՜յ ...
Բազեն թռավ, բազեն փախավ,
Ինչ լավ եղավ, հե՜, հե՜, հե՜ ...

### Հանելուկներ

1. Պառավը կանգնել է առվին,
քառասուն ծալ շոր կա հագին։

(կ—ղ—մբ)

2. Ձեռներ չունի՝ ծափ է տալիս,
քամու յերգին չափ է տալիս։ (ծ—ռ)





## ՋԵԿԸ

Ջեկը հիվանդացել էր։ Ռաֆիկը նրա տակը փափուկ խոտ փռեց։ Կաթ էր տալիս նրան, խնամում էր։ Ջեկն առողջացավ։ Նա Ռաֆիկի հետևից վազում էր ամեն տեղ։

Մի անգամ Ռաֆիկը ձուկ էր վորսում, հանկարծ ընկավ գետը և սկսեց սուզվել։ Ջեկն իրեն գցեց ջուրը և Ռաֆիկին դուրս քաշեց, հանեց ափ։

Այդ դեպքից հետո Ռաֆիկն էլ չի բաժանվում Ջեկից։

## ԱՐԵՎ

Արև, արև, յեկ, յեկ,
զիզի քարին վեր յեկ.
սև-սև ամպեր հեռացեք,
արևին ճամփա տվեք.
Թողեք, վոր գա գա մեզ մոտ,
դրա լուսին ենք կարոտ։

Կարմիր արև, յեկ, յեկ,
Նախշուն քարին վեր յեկ։
Արևն հաղթեց ամպերին,
շողքը ձգեց սարերին.
զիզի քարը տես, տես,
պսպղում է վոսկու պես։
Սիրուն արև, միշտ յեկ,
Զիզի քարին վեր յեկ։

## ՇՈՒՆԸ ՅԵՎ ԱԳՌԱՎՆԵՐԸ



Շունը վոսկոր եր կրծում։ Նրան տեսան յերկու ագռավ։ Թռան յեկան, շան գըլխի վերևում պտույտներ կատարեցին և վորոշեցին խլել վոսկորը։

Մի ագռավը ձգեց շան պոչից։ Շունը շուռ յեկավ և ուզում եր բռնել նրան։ Այդ ժամանակ մյուս ագռավը կտցեց վոսկորը և յերկուսն ել թռան գոմի կտուրը։



Խնձոր

Խնձոր, խնձոր, ինչ խնձոր,
Կլոր, կլորիկ, մեղրածոր,
Հուրուր-մուրուր թարմ ու նոր,
Կարմրաթուշիկ, փափկահամ:
Կուր ու կորիկ նստած հար
Ճյուղերում են կեղևից,
Նոր է քաղած ճյուղերից:



## ԼՈՒՍԱԲԱՑԻՆ



— Ծուղրուղու.
Աքլորը գիլ կանչեց թառին։
— Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,
Զարթնեց մթնում ծիտը ծառին։

— Ծուղրուղու.
Խոսեց ծեգին յերկրորդ բերան.
— Հո՜-հո՛, հո՛-հո՜,
Նախիրն արդեն հանդը տարան։
— Ծուղրուղու.
Լույսը բացվեց յերկրորդ կանչին։
Վո՛ւ-վո՛ւյ, վո՛ւյ-վո՛ւյ,
Նստեց նանը տեղի միջին։

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

---

## ՍԱԳ

Սագիկ, մագիկ, իմ սիրունիկ,
յես քեզ կտամ քաղցր կուտիկ,
վոր դու ուտես շուտ մեծանաս,
ուրախ ապրես, գվարճանաս։
Յերբ մեծանաս, մեծ սագ դառնաս,
յես կխնդրեմ իմ մայրիկիս,
վոր նա ժողվե քո փետուրներ
և ինձ համար շինե բարձեր։



## ՊԱՌԱՎՆ ՈՒ ԱՅԾԸ

Կար չկար յերբեմն
Մի աղքատ պառվիկ։
Ուներ մեր պառավը
Կաթնատու այծիկ.
Ջալիկ, մալիկ,
Կաթնատու այծիկ։
Պառավը ձմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատառը
Նրա հետ կիսեց.
Սիրով, հոժար,
Նրա հետ կիսեց։
Յերբ վոր ձյունը հալ-
վեց,
Բսավ կանաչ խոտ,
Պառավն իր այծիկը
Դուրս տարավ արոտ,
Ուրախ, զվարթ
Դուրս տարավ արոտ։
Թանձր մառախուղը
Գետինը պատեց,

Պառավի առջևից
Այծը կորցրեց.
Ափսոս, ափսոս,
Այծը կորցրեց։
Պառավը լաց եղավ.
Իսկ գայլը վոռնաց,
Մոլորված այծիկը
Բարձր մկըկաց.
Մըկը՜կ, մըկը՜կ,
Այծը մկըկաց։
Գայլն իսկույն մոտե-
ցավ,
Այծին շալակեց.
Պառավը հետևից
Բարձրաձայն գոչեց.
«Հա՜յ-հա՜յ, վա՜յ-վա՜յ»,—
Բարձրաձայն գոչեց։
Խեղճը մնաց կանգնած
Մի փունջ խոտ ձե-
ռին,



Անմխիթար ձայնով
Կանչելով այծին.
«Յե՜կ-յե՜կ, յե՜կ-յե՜կ»,—
Կանչելով այծին։

## ՎՈՉԽԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԱՌՆԵՐԸ



Խոտը կանաչեց։ Կոլխոզի վոչխարներին դաշտ հանեցին։

Վոչխարները ծնեցին պստլիկ գառնուկներ։

Յերբ գառնուկն ուտել ե ուզում, գոփում ե գլխով մոր փորին, չոքում ե առջևի վոտքերի վրա ու կպչում կուրծին։ Իսկ մայր վոչխարը հոտոտում ե նրան, լիզում ե, չի թողնում իրենից հեռու գնա։

Կուշտ ուտում են գառնուկներն ու սկսում իրար հետ խաղալ։

---

## ԾԻՏԻԿԻ ՈՐՈՐՔԸ

Կախված ե ճյուղքից ճոճը ծիտիկի.
փըչի՜, հովիկ, փըչի՜,
ճոճն որորվի, տանի բերի
նանի՜, ծիտիկ, նանի՜։
Ծիտիկը անուշ յերազ ե տեսնում.
փըչի՜, հովիկ, փըչի՜,
ճոճն որորվի, տանի բերի.
նանի՜, ծիտիկ, նանի՜։
Բայց տես, ծիտիկը քընից չզարթնի
կամաց փըչի, կամա՜ց,
ճոճն ել զգույշ տանի բերի.
նանի, ծիտիկ, նանի՜։



Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ

## ԱՐՏԵԿՈՒՄ

Սուրիկի հորեղբայրն ապրում է Մոսկվայում։ Նրա տղան՝ Վանիկը պիոներ է։Նա գերազանցիկ է։ Ամառը Վանիկը գնացել էր Արտեկ հանգստանալու։ Այնտեղից նամակ էր գրել Սուրիկին։ Գրել էր, թե վորքան ուրախ են այնտեղ։ Լողանում են ծովում, խաղում են Իսպանիայից յեկած յերեխաների հետ, զբոսնում են։

Մի անգամ նրանց մոտ է յեկել Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը։ Նա յերկար խոսել և կատակել է յերեխաների հետ, իսկ Վանիկի գլուխը շոյել է։

—Ի՞նչ բախտավորն է մեր Վանիկը,—մտածում է Սուրիկը։





Կ. Յե. Վորոշիլով

Ընկ. Վորոշիլովը մեր անհաղթ<br>
Կարմիր Բանակի քաջ մարշալն է:

Կարմիր Բանակը.-<br>
Խորհուրդների յերկրի<br>
արթուն պահակն է:



## ԲԱՆՎՈՐ

Ահա բանվորը, ահա,<br>
սիրում է գործ,<br>
աշխատանք։<br>
Նա յե շինել, կառուցել<br>
աշխարհում<br>
Ինչ վոր տեսնես,—<br>
Դու էլ յեղիր նրա պես։

## ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Նավաստիներ ենք
Խորհրդի յերկրի,
Վարում ենք նավը
Համարձակ, արի։
Փոթորկից, քամուց
Մենք չենք վախենում,
Նավաստիները
Միշտ քաջ են, կայուն։

## ՈԴԱՉՈՒ ԿԱՄՈՆ

Կամոն դպրոցում շատ լավ եր սովորում։

Նա սիրում եր սավառնակներ շինել։ Դասամիջոցին յերեխաների հետ ռազմական խաղեր եր խաղում։ Հետո Կամոն մտավ ոդաչուների դպրոցը։

Հիմա նա թռչում ե ռազմական մեծ ինքնաթիռի վրա։ Կամոն պաշտպանում ե մեր յերկիրը թշնամիներից։

## ԻՆՉՊԵՍ ԵԴԻԿԸ ՓՐԿԵՑ ԳՆԱՑՔԸ

Եդիկը դպրոց եր գնում յերկաթուղու գծի մոտով։ Տեսնում ե, վոր ռելսի ծայրը կոտրվել ե։ Այդ ժամանակ դեպի կայարան եր գալիս մարդատար գնացքը։

Եդիկն առաջ վազեց, քանդեց իր պիոներական վզկապը և սկսեց թափահարել։





Մեքենավարը նկատեց Եդիկին և կանգնեցրեց գնացքը։ Յերկաթուղու պետը պարգևատրեց Եդիկին և նվիրեց նրան ընկեր Ստալինի նկարը։

## ՍԱՀՄԱՆԱՊԱՀԸ




Յես զանգրահեր յեղբայր ունեմ,
Նա զինվոր ե բանակում;
գիշերները միշտ արթուն ե,
նա սահմանին ե հսկում։
Հինգթևանի աստղ ե կրում
մոխրագույն իր գըլխարկին,
և հրացանը սուր սվինով
շողշողում ե նրա ուսին։

## ԿՈԼԽՈԶԻՑ ՔԱՂԱՔ

Քեռի Սարգիսը կոլխոզից քաղաք էր յեկել։ Իր հետ բերել էր և Կիմին։ Ցերեկը քեռին գործը վերջացրեց, իսկ յերեկոյան ասաց Կիմին.

— Կիմ, արի գնանք քաղաքը տեսնենք։

Գնացին։

Կիմի աչքերը փայլում են։ Շուրջն այնպես լույս է։ Այնպիսի բարձր, մեծ շենքեր կան։

Փողոցով գնում, գալիս են ավտոմոբիլներ, տրամվայներ, ավտոբուսներ։ Միլիցիոները կանգնած հետևում է կարգին։ Կիմը մոտենում է մի խանութի, նայում է, նայում, մոտենում մյուսին։ Կպչում է գնացող-յեկողներին։

— Աջ կողմով գնանք, Կիմ, աջ կողմով,— ասում է քեռի Սարգիսը։

Նրանք յեղան ունիվերմագում։ Կիմի համար գնեցին նոր հագուստ, կոշիկներ, խաղալիք։

## ՏՈՆԱԾԱՌ

Տոնածառ ջան, տոնածառ,
Ինչ սիրուն ես, ինչ պայծառ։
Ես ինչ լավ է, ես ինչ լավ է,
Չորս կողմը լույս ու փայլ է։

Մեր դահլիճի մեջտեղում,
տոնածառն է փայլփլում.
Հազար գույնի լույսերով
և պլպլան զարդերով։





Ինչ ուրախ ենք մենք այսոր,
Այս դահլիճում լուսավոր,
Յերգում, պարում ու խնդում,
Քեզ ենք գովում ու հրճվում։

Ջա՜ն, տոնածառ մեր սիրուն,
Ի՞նչ փայլուն ես, պսպղուն,
Զարդեր ունես անհամար ...
Ի՞նչ ես բերել մեզ համար։

Սիրուն-սիրուն նվերներ,
Քաղցր, անուշ կանֆետներ,
Բերել ես մեզ նոր տարի,
Գալդ մեզ համար բարի։

Այս յերջանիկ կյանքը մեր,
Ստալինն է մեզ տվել,
Ապրես յերկար, շատ օրեր,
Մեր առաջնորդ և ընկեր։

## Ձեռագիր տառեր
## Մեծատառ և փոքրատառ

Աա Բբ Գգ Դդ Եե

Զզ Ըը Թթ Ժժ Իի

Լլ Խխ Ծծ Կկ Հհ

Ձձ Ղղ Ճճ Մմ Յյ

Նն Շշ Ոո Չչ Պպ

Ջջ Ռռ Սս Վվ Տտ

Րր Ցց Ուու Փփ Քք

Ֆֆ յեվ և

**Ձայնավոր տառեր.** ա, ե, ը, ի, ո, ու

**Բաղաձայն տառեր.** բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ։



## Տպագիր տառեր
## Մեծատառ և փոքրատառ

Աա Բբ Գգ Դդ Եե

Զզ Ըը Թթ Ժժ Իի

Լլ Խխ Ծծ Կկ Հհ

Ձձ Ղղ Ճճ Մմ Յյ

Նն Շշ Ոո Չչ Պպ

Ջջ Ռռ Սս Վվ Տտ

Րր Ցց Ուու Փփ Քք

Ֆֆ և

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| I | ա | բ | գ | դ | ե | զ |
| II | ը | թ | ժ | ի | լ | խ |
| III | ծ | կ | հ | ձ | ղ | ճ |
| IV | մ | յ | ն | շ | ո | չ |
| V | պ | ջ | ռ | ս | վ | տ |
| VI | ր | ց | ու | փ | ք | ֆ |

ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР

Պատ. խմբագիր՝ Ա. Խաչիկյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլավլիտի լիազոր Վ.—2239 Հրատ. 1930.
Պատվեր 592. Տիրաժ 20.000.
Թուղթ 62×94. Տպագրական 4,5 մամ.
Մեկ մամ. 43,680 նշան.
Հանձնված է արտադրության 19 ապրիլի 1939 թ.
Ստորագրված է տպագր. համար 1 հուլիսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0243133

ԳԻՆԸ 1 Ռ.
ԿԱԶՄԸ 60 Կ.

З. АДЖЕМЯН
**Б У К В А Р Ь**
для 1-го класса
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.